Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-886-16.07.2024,30.08.2024-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «ընտանեկան» բառը փոխարինել «անապահովության» բառով.

2) 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «տարածքային կենտրոնում» բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա. 1-ին կետում «օրենքով» բառը փոխարինել «օրենսդրությամբ» բառով.

բ. 3-րդ կետում «ոչ հավաստի» բառից հետո լրացնել «կամ կեղծ» բառով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 5-9-րդ մասերում «Ընտանեկան նպաստը, սոցիալական» բառերը փոխարինել «Անապահովության» բառով, իսկ 8-րդ մասում «կանխիկ եղանակով վճարելը» բառերից հետո լրացնել «անապահովության» բառով:

Հոդված 5. Օրենքի Գլուխ 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գ Լ Ո Ւ Խ 3

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

Հոդված 13. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով (այսուհետ՝ Գնահատման կարգ) սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության

կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից:

2.Ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հաշվարկելու նպատակով ընտանիքի բոլոր անդամների՝ Գնահատման կարգով հաշվարկվող եկամուտների հանրագումարը բաժանվում է ընտանիքի անդամների հաշվարկային թվի վրա:

3.Ընտանիքի անդամների հաշվարկային թիվը ձևավորվում է սույն մասի 1-4-րդ կետերում նշված գործակիցների հիման վրա ստացված թվերը գումարելով՝

1) 18 և ավելի տարեկան անձի գործակիցը 1 է.
2) 15-17 տարեկան անձի գործակիցը 0.7 է .
3) 10-14 տարեկան անձի գործակիցը 0.55 է.
4) 0-9 տարեկան անձի գործակիցը 0.45 է:

4. Անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի նկատմամբ հաշվարկված տոկոսը:

5.Անապահովության նպաստի նվազագույն չափը չի կարող ցածր լինել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի տասը տոկոսի արժեքից:

6. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը ծագում է անապահովության նպաստ նշանակելու օրվա դրությամբ և անապահովության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսվանից՝ մինչև նպաստի իրավունքի դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան տասներկու ամիս ժամկետով:

7. Անապահովության նպաստի նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի կողմից, որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու համար, դիմում չներկայացնելու կամ դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

Հոդված 14. Անապահովության նպաստ նշանակելու վարչական վարույթի առանձնահատկությունները

1. Անապահովության նպաստի նշանակման վարչական վարույթը բաղկացած է դիմումի ներկայացման, օրենսդրությամբ սահմանված տվյալների հավաքագրման և վարչական ակտի կայացման փուլերից:

2. Անապահովության նպաստ նշանակելու նպատակով ընտանիքի չափահաս անդամներից մեկը՝ չափահաս մյուս անդամների գրավոր կամ էլեկտրոնային համաձայնությամբ, անհատական օգտահաշվի միջոցով առցանց ներկայացնում է Գնահատման կարգով հաստատված դիմում: Դիմումին կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճեններ, որոնք հավաքվում են ընտանիքի սոցիալական էլեկտրոնային գործում:

3. Անապահովության նպաստը նշանակելու կամ մերժելու կամ անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ անապահովության նպաստի չափի փոփոխման վերաբերյալ վարչական ակտն ընդունվում է ինքնաշխատ եղանակով՝ ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում, որի արդյունքում ձևավորվում է էլեկտրոնային կարգադրություն (այսուհետ՝ Կարգադրություն)՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում: Դիմումի ներկայացման օր է համարվում օրենսդրությամբ սահմանված դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրը: Կարգադրության ընդունման համար հիմք են դիմողի առցանց ներկայացրած դիմումը և փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճենները, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին հասանելի այլ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների (համաձայնությամբ) տեղեկատվական շտեմարաններում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալները, ինչպես նաև դիմողի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով իրականացվող տնայցի արդյունքները:

4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու հիմքով անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում առանձին կարգադրություն չի ձևավորվում:

5. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ձևավորման պահից: Կարգադրությունը դիմողին տրամադրվում է ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում դիմողի անհատական օգտահաշվի միջոցով՝ այն ձևավորվելու օրվա ընթացքում, իսկ դիմողի ցանկության դեպքում նաև՝ էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու կամ տարածքային կենտրոնում առձեռն տրամադրելու միջոցով՝ նման առցանց պահանջ ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Կարգադրության հետ

համաձայն չլինելու դեպքում, դիմողը կարող է այն բողոքարկել դատական կամ վարչական կարգով: Դատական կամ վարչական բողոքը կարող է ներկայացվել Կարգադրությունն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման դեպքում դիմողը ներկայացնում է բողոք Միասնական սոցիալական ծառայությանը՝ առցանց: Վարչական կարգով բողոքարկման արդյունքում վարչական ակտը կայացվում է դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման հիման վրա Կարգադրություն ընդունվում է՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը (տվյալները), իսկ կայացված համապատասխան վարչական ակտը դիմողին տրամադրվում է սույն մասով սահմանված եղանակով ու ժամկետներում:

6. Վարչական բողոքի արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բավարարել բողոքը և ձևավորել նոր Կարգադրություն.

2) մերժել բողոքը՝ Կարգադրությունը թողնելով անփոփոխ:

Հոդված 15. Անապահովության նպաստի չափը որոշելը

1. Անապահովության նպաստի ամսական հիմնական չափը հաշվարկվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա համար սահմանած անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի և ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի տարբերությունն ընտանիքի անդամների հաշվարկային թվով բազմապատկելու միջոցով:

2. Ընտանիքին վճարվում է հավելում՝ հիմք ընդունելով ընտանիքի խնամառության խումբը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և չափով:

3. Ընտանիքի խնամառության խումբը որոշվում է՝ հիմք ընդունելով ընտանիքում խնամառուների թվի հարաբերակցությունն աշխատունակ անդամների թվի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Ընտանիքի խնամառության խումբը որոշելիս,

1) ընտանիքի խնամառու անդամ է համարվում՝ ընտանիքի մինչև 18 տարեկան կամ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ ունեցող կամ 75 և ավելի տարեկան անձը, ինչպես նաև այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում .

2)ընտանիքի աշխատունակ անդամ է համարվում՝ 18 տարեկանից մինչև 62 տարեկանը ներառյալ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ չունեցող անձը:

4. Ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամներին վերագրվում է եկամուտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում, չափով ու ժամկետներում:

Եկամուտի վերագրումն ընտանիքի անդամի համար հաշվարկվող եկամուտ է՝ անկախ այն փաստացի ստանալու հանգամանքից:

Հոդված 15.1. Անապահովության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու դեպքում.

4) ընտանիքի անդամի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) անապահովության նպաստ ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-7-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:»:

Հոդված 6. Օրենքի Գլուխ 4-ը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում և 3-րդ մասում «եռամսյակային» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

2) 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Օրենքի 19-րդ և 21-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի

1) 1-ին մասում «ընտանեկան նպաստի» բառերը փոխարինել «անապահովության նպաստ ստանալու» բառերով.

2) 2-րդ մասի «դիմում է տարածքային կենտրոն» բառերը փոխարինել «տարածքային կենտրոն է ներկայացնում առցանց դիմում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով.

3) իսկ 3-րդ մասում «ընտանեկան» բառը փոխարինել «անապահովության» բառով:

Հոդված 10. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 22. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունք ունի Գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության նպաստ ստանալու իրավունք չունեցող այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք վերապահող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը ծագում է եռամսյա հրատապ օգնությունը նշանակելու օրվա դրությամբ և վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից՝ մինչև եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան երեք ամիս ժամկետով:

3. Եռամսյա հրատապ օգնությունը նշանակվում է անապահովության նպաստ նշանակելու համար սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերով :

4. Եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի կողմից, որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու համար, դիմում չներկայացնելու, դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ընթացիկ տարվա ընթացքում եռամսյա հրատապ օգնություն նշանակելու պարբերականության քանակը լրանալու դեպքում»:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 23. Եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքերը

1. Եռամսյա հրատապ օգնության ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ ընտանիքի կողմից ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում.

4) սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի անդամի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

8) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-8-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

3. Ընտանիքին ընթացիկ տարվա ընթացքում եռամսյա հրատապ օգնություն կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պարբերականությամբ»:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի «Նպաստառուի» բառից հետո լրացնել «կամ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամի» բառերը:

Հոդված 13. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հավաստի» բառից հետո լրացնել « կամ կեղծ» բառերը.

2) 2-րդ մասից հանել «, նպաստ նշանակող տարածքային կենտրոնի հետ փոխհամաձայնեցված» բառերը.

3) 3-րդ մասից հանել «Խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությամբ ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված նպաստների ավելի վճարված գումարները կարող են վերադարձվել ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով կամ համարվել մարած՝ ոչ ավելի ստացած վերջին ամսվա նպաստի եռապատիկը:» բառերը.

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նպաստների՝ ավելի վճարված գումարների վերադարձման ժամանակացույց կազմելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 14. Օրենքի 39-րդ հոդվածի 14-16-րդ մասերում «ընտանեկան նպաստ, սոցիալական» և «Ընտանեկան նպաստ, սոցիալական» բառերը փոխարինել «անապահովության» բառով՝ իրենց հոլովաձևերով:

Հոդված 15.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարզում կամ մարզերում, որից հետո՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի գործողության պահին ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակվում են մինչև հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ընտանեկան կամ սոցիալական նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը՝

1) անպահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար դիմող ընտանիքների ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի բոլոր անդամների կամ միակ անդամի մահվան դեպքում ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է անձի մահվան ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքները, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման հիմքով տրամադրվող այլ ծառայություններից օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվող ընտանիքները շարունակում են օգտվել դրանցից նույն չափով՝ մինչև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը կամ օրենքով սահմանված այլ հիմքերի առաջացումը:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-886-16.07.2024,30.08.2024-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետում «ընտանեկան» բառը փոխարինել «անապահովության» բառով.

2) 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «տարածքային կենտրոնում» բառերը:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի՝

ա. 1-ին կետում «օրենքով» բառը փոխարինել «օրենսդրությամբ» բառով.

բ. 3-րդ կետում «ոչ հավաստի» բառից հետո լրացնել «կամ կեղծ» բառով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 5-9-րդ մասերում «Ընտանեկան նպաստը, սոցիալական» բառերը փոխարինել «Անապահովության» բառով, իսկ 8-րդ մասում «կանխիկ եղանակով վճարելը» բառերից հետո լրացնել «անապահովության» բառով:

Հոդված 5. Օրենքի Գլուխ 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Գ Լ Ո Ւ Խ 3

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

Հոդված 13. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգով (այսուհետ՝ Գնահատման կարգ) սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից:

2.Ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հաշվարկելու նպատակով ընտանիքի բոլոր անդամների՝ Գնահատման կարգով հաշվարկվող եկամուտների հանրագումարը բաժանվում է ընտանիքի անդամների հաշվարկային թվի վրա:

3.Ընտանիքի անդամների հաշվարկային թիվը ձևավորվում է սույն մասի 1-4-րդ կետերում նշված գործակիցների հիման վրա ստացված թվերը գումարելով՝

1) 18 և ավելի տարեկան անձի գործակիցը 1 է.
2) 15-17 տարեկան անձի գործակիցը 0.7 է .
3) 10-14 տարեկան անձի գործակիցը 0.55 է.
4) 0-9 տարեկան անձի գործակիցը 0.45 է:

4. Անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը սահմանվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի նկատմամբ հաշվարկված տոկոսը:

5.Անապահովության նպաստի նվազագույն չափը չի կարող ցածր լինել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի տասը տոկոսի արժեքից:

6. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը ծագում է անապահովության նպաստ նշանակելու օրվա դրությամբ և անապահովության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսվանից՝ մինչև նպաստի իրավունքի դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան տասներկու ամիս ժամկետով:

7. Անապահովության նպաստի նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի կողմից, որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու համար, դիմում չներկայացնելու կամ

դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

Հոդված 14. Անապահովության նպաստ նշանակելու վարչական վարույթի առանձնահատկությունները

1. Անապահովության նպաստի նշանակման վարչական վարույթը բաղկացած է դիմումի ներկայացման, օրենսդրությամբ սահմանված տվյալների հավաքագրման և վարչական ակտի կայացման փուլերից:

2. Անապահովության նպաստ նշանակելու նպատակով ընտանիքի չափահաս անդամներից մեկը՝ չափահաս մյուս անդամների գրավոր կամ էլեկտրոնային համաձայնությամբ, անհատական օգտահաշվի միջոցով առցանց ներկայացնում է Գնահատման կարգով հաստատված դիմում: Դիմումին կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճեններ, որոնք հավաքվում են ընտանիքի սոցիալական էլեկտրոնային գործում:

3. Անապահովության նպաստը նշանակելու կամ մերժելու կամ անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ անապահովության նպաստի չափի փոփոխման վերաբերյալ վարչական ակտն ընդունվում է ինքնաշխատ եղանակով՝ ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում, որի արդյունքում ձևավորվում է էլեկտրոնային կարգադրություն (այսուհետ՝ Կարգադրություն)՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում: Դիմումի ներկայացման օր է համարվում օրենսդրությամբ սահմանված դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրը: Կարգադրության ընդունման համար հիմք են դիմողի առցանց ներկայացրած դիմումը և փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճենները, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին հասանելի այլ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների (համաձայնությամբ) տեղեկատվական շտեմարաններում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալները, ինչպես նաև դիմողի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով իրականացվող տնայցի արդյունքները:

4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու հիմքով անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում առանձին կարգադրություն չի ձևավորվում:

5. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ձևավորման պահից: Կարգադրությունը դիմողին տրամադրվում է ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում դիմողի անհատական օգտահաշվի միջոցով՝ այն ձևավորվելու օրվա ընթացքում, իսկ դիմողի ցանկության դեպքում նաև՝ էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու կամ տարածքային կենտրոնում առձեռն տրամադրելու միջոցով՝ նման առցանց պահանջ ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Կարգադրության հետ համաձայն չլինելու դեպքում, դիմողը կարող է այն բողոքարկել դատական կամ վարչական կարգով: Դատական կամ վարչական բողոքը կարող է ներկայացվել Կարգադրությունն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման դեպքում դիմողը ներկայացնում է բողոք Միասնական սոցիալական ծառայությանը՝ առցանց: Վարչական կարգով բողոքարկման արդյունքում վարչական ակտը կայացվում է դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման հիման վրա Կարգադրություն ընդունվում է՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը (տվյալները), իսկ կայացված համապատասխան վարչական ակտը դիմողին տրամադրվում է սույն մասով սահմանված եղանակով ու ժամկետներում:

6. Վարչական բողոքի արդյունքում կայացվում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) բավարարել բողոքը և ձևավորել նոր Կարգադրություն.

2) մերժել բողոքը՝ Կարգադրությունը թողնելով անփոփոխ:

Հոդված 15. Անապահովության նպաստի չափը որոշելը

1. Անապահովության նպաստի ամսական հիմնական չափը հաշվարկվում է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության տվյալ տարվա համար սահմանած անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի և ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի տարբերությունն ընտանիքի անդամների հաշվարկային թվով բազմապատկելու միջոցով:

2. Ընտանիքին վճարվում է հավելում՝ հիմք ընդունելով ընտանիքի խնամառության խումբը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և չափով:

3. Ընտանիքի խնամառության խումբը որոշվում է՝ հիմք ընդունելով ընտանիքում խնամառուների թվի հարաբերակցությունն աշխատունակ անդամների թվի նկատմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Ընտանիքի խնամառության խումբը որոշելիս,

1) ընտանիքի խնամառու անդամ է համարվում՝ ընտանիքի մինչև 18 տարեկան կամ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ

ունեցող կամ 75 և ավելի տարեկան անձը, ինչպես նաև այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում .

2)ընտանիքի աշխատունակ անդամ է համարվում՝ 18 տարեկանից մինչև 62~~3~~ տարեկանը ներառյալ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ չունեցող անձը:

4. Ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամներին վերագրվում է եկամուտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում, չափով ու ժամկետներում: Եկամուտի վերագրումն ընտանիքի անդամի համար հաշվարկվող եկամուտ է՝ անկախ այն փաստացի ստանալու հանգամանքից:

Հոդված 15.1. Անապահովության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող~~ած~~ տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու դեպքում.

4) ընտանիքի անդամի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) անապահովության նպաստ ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-7-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:~~Անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվանից, իսկ անապահովության նպաստի վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից.~~»:

Հոդված 6. Օրենքի Գլուխ 4-ը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում և 3-րդ մասում «եռամսյակային» բառը փոխարինել «եռամսյա» բառով.

2) 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 8. Օրենքի 19-րդ և 21-րդ հոդվածները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի

1) 1-ին մասում «ընտանեկան նպաստի» բառերը փոխարինել «անապահովության նպաստ ստանալու» բառերով.

2) 2-րդ մասի «դիմում է տարածքային կենտրոն» բառերը փոխարինել «տարածքային կենտրոն է ներկայացնում առցանց դիմում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերով.

3) իսկ 3-րդ մասում «ընտանեկան» բառը փոխարինել «անապահովության» բառով:

Հոդված 10. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 22. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը

1. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունք ունի Գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության նպաստ ստանալու իրավունք չունեցող այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստ ստանալու իրավունք վերապահող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը ծագում է եռամսյա հրատապ օգնությունը նշանակելու օրվա դրությամբ և վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից՝ մինչև եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի քան երեք ամիս ժամկետով:

3. Եռամսյա հրատապ օգնությունը նշանակվում է անապահովության նպաստ նշանակելու համար սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերով :

~~3.~~4. Եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի կողմից, որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու համար, դիմում չներկայացնելու, դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու կամ Հայաստանի Հանրապետության կ~~Կ~~առավարության որոշմամբ սահմանված ընթացիկ տարվա ընթացքում եռամսյա հրատապ օգնություն նշանակելու պարբերականության քանակը լրանալու դեպքում»:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 23. Եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքերը

1. Եռամսյա հրատապ օգնության ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ ընտանիքի կողմից ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող~~ած~~ տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում.

4) սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի ~~մինչև 18 տարեկան~~ անդամի պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

8) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-8-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

~~Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվանից, իսկ եռամսյա հրատապ օգնության վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:~~

3. Ընտանիքին ընթացիկ տարվա ընթացքում եռամսյա հրատապ օգնություն կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պարբերականությամբ»:

Հոդված 12. Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի «Նպաստառուի» բառից հետո լրացնել «կամ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամի» բառերը:

Հոդված 13. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «~~ամսից~~հավաստի» բառից հետո լրացնել « կամ կեղծ~~, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նպաստների~~» բառերը.

2) 2-րդ մասից հանել «, նպաստ նշանակող տարածքային կենտրոնի հետ փոխհամաձայնեցված» բառերը.

3) 3-րդ մասից հանել «Խորհրդի պատշաճ հիմնավորված առաջարկությամբ ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում նպաստի իրավունք տվող կամ նպաստի չափի

փոփոխություն առաջացնող ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված նպաստների ավելի վճարված գումարները կարող են վերադարձվել ընտանիքի (քաղաքացու) հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով կամ համարվել մարած՝ ոչ ավելի ստացած վերջին ամսվա նպաստի եռապատիկը:» բառերը.

4) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նպաստների՝ ավելի վճարված գումարների վերադարձման ժամանակացույց կազմելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 14. Օրենքի 39-րդ հոդվածի 14-16-րդ մասերում «ընտանեկան նպաստ, սոցիալական» և «Ընտանեկան նպաստ, սոցիալական» բառերը փոխարինել «անապահովության» բառով՝ իրենց հոլովաձևերով:

Հոդված 15. ~~**Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**~~

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարզում կամ մարզերում, որից հետո՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի գործողության պահին ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակվում են մինչև հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4~~5~~-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. Մինչև սույն հոդվածի 3~~4~~-րդ մասով սահմանված ընտանեկան կամ սոցիալական նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը՝

1) անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար դիմող ընտանիքների ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի բոլոր անդամների կամ միակ անդամի մահվան դեպքում ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է անձի մահվան ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքները, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման հիմքով տրամադրվող այլ ծառայություններից օրենսդրությամբ

սահմանված կարգով օգտվող ընտանիքները շարունակում են օգտվել դրանցից նույն չափով՝ մինչև սույն հոդվածի 3~~4~~-րդ և 4~~5~~-րդ մասերով սահմանված նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը կամ օրենքով սահմանված այլ հիմքերի առաջացումը:

~~1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:~~

~~2. Սույն օրենքով նախատեսվող փոփոխությունները գործելու են անապահովության գնահատման նոր կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մեկ մարզում, որից հետո մնացած մարզերում և Երևան քաղաքում:~~

~~3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:~~

~~4. Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզում կամ Երևան քաղաքում սույն օրենքի գործողության պահին ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակվում են մինչև հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:~~

~~5. Մինչև սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ընտանեկան կամ սոցիալական նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը՝~~

~~1) անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար դիմող ընտանիքների ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.~~

~~2) ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի բոլոր անդամների կամ միակ անդամի մահվան դեպքում ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է անձի մահվան ամսվան հաջորդող ամսվա 1-ից:~~

~~6. Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքները, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման հիմքով տրամադրվող այլ ծառայություններից օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվող ընտանիքները շարունակում են օգտվել դրանցից նույն չափով՝ մինչև սույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը կամ օրենքով սահմանված այլ հիմքերի առաջացումը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886-16.07.2024-ԱՍ-011/1), «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[1] -16.07.2024-ԱՍ-011/1), «ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[2] -16.07.2024-ԱՍ-011/1), «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[3] -16.07.2024-ԱՍ-011/1), «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[4] -16.07.2024-ԱՍ-011/1), «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[5] -16.07.2024-ԱՍ-011/1) ԵՎ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-886[6] -16.07.2024-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	««Պետական նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի **նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 13-րդ հոդվածի 7-րդ**	Առաջարկվում է «դիմում չներկայացնելու» բառերից հետո լրացնել «կամ դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու» բառերը, որի արդյունքում անապահովության նպաստի նշանակման մերժման հիմքերը թվարկվում են առավել սպառիչ:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մաս			
2.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 14-րդ հոդվածի 3-րդ մաս**	Առաջարկվում է «անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու» բառերից հետո լրացնել «կամ անապահովության նպաստի չափի փոփոխման» բառերը, քանի որ անապահովության նպաստի չափի փոփոխման դեպքում նույնպես կայացվելու է վարչական ակտ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 15-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ**	Առաջարկվում է «75 և ավելի տարեկան անձը» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև այլ անձինք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում» բառերը: Կատարվել է տեխնիկական վրիպակի (բացթողում) ուղղում՝ հաշվի առնելով անապահովության գնահատման նոր համակարգի հայեցակարգի նախագծով ներկայացված դրույթները:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 15-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ**	Առաջարկվում է **«մինչև 63 տարեկան» բառերը փոխարինել «մինչև 62 տարեկանը ներառյալ» բառերով՝ դրույթի հստակեցման և տալընթերցումից խուսափելու նպատակով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 15.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ**	Առաջարկվում է **«հանդիսացած» բառը փոխարինել «հանդիսացող» բառով: Կատարվել է տեխնիկական վրիպակի ուղղում, քանի որ նշված կետով անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե նշված հիմքը ծագել է ընթացիկ ամսվա ընթացքում:**	Ընդունվել է:	Ընդունվել է:

6.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 5-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ գլխի 15.1-ին հոդվածի 2-րդ մաս**	Առաջարկվում է **15.1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** «2. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-7-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:» Առաջարկի նպատակն է հստակեցնել, որ բոլոր դեպքերում անապահովության նպաստ ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում են սահմանված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ տվյալների կամ փաստաթղթերի կեղծ կամ ոչ հավաստի լինելու հիմքով՝ դրանք դադարեցվում են հայտնաբերման ամսվանից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 10-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 22-րդ հոդված**	Առաջարկվում է **22-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝** **«4.** Եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի կողմից, որպես աշխատանք փնտրող անձ հաշվառվելու համար, դիմում չներկայացնելու, դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ընթացիկ տարվա ընթացքում եռամսյա հրատապ օգնություն նշանակելու պարբերականության քանակը լրանալու դեպքում:»: Առաջարկի արդյունքում եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժելու հիմքերը թվարկվում են ավելի սպառիչ:		
8.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Առաջարկվում է **«հանդիսացած» բառը փոխարինել «հանդիսացող» բառով: Կատարվել է տեխնիկական վրիպակի ուղղում, քանի որ նշված կետով եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե նշված հիմքը ծագել է ընթացիկ ամսվա ընթացքում:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	Առաջարկվում է **«մինչև 18 տարեկան» բառերը հանել, քանի որ պարտադիր կրթությունից կարող է դուրս մնալ նաև 18 տարին լրացած անձը:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 11-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 23-րդ հոդվածի 2-րդ մաս**	Առաջարկվում է **23-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** «2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-8-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:»: Առաջարկի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նպատակն է հստակեցնել, որ բոլոր դեպքերում եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և վճարումը դադարեցվում են հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ տվյալների կամ փաստաթղթերի կեղծ կամ ոչ հավաստի լինելու հիմքով՝ դրանք դադարեցվում են հայտնաբերման ամսվանից:		
11.	ՀՀ կառավարություն	Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկվում է Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասը **շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«1)** 1-ին մասում «հավաստի» բառից հետո լրացնել «կամ կեղծ» բառերը.**»՝** **Նախագծի 3-րդ հոդվածի «բ» կետի կարգավորմանը համապատասխանեցնելու նպատակով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
12.	ՀՀ կառավարություն	Նախագծի 14-րդ հոդված	Առաջարկվում է «ընտանեկան նպաստ, սոցիալական» բառերից հետո լրացնել «և «Ընտանեկան նպաստ, սոցիալական» բառերը, քանի որ «Պետական նպաստների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 14-16-րդ մասերում «ընտանեկան» բառը հանդիպում է նաև մեծատառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
13.	ՀՀ կառավարություն	Նա**խագծի 15-րդ հոդված**	Առաջարկվում է Նախագծի 15-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Հոդված 15. ~~12.~~11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում՝ Հայաստանի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարզում կամ մարզերում, որից հետո՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: ~~13.~~12. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: ~~14.~~13. Սույն օրենքի գործողության պահին ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքների նպաստի վճարումները շարունակվում են մինչև հաջորդ հաշվառման (փաստագրման) ամիսը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի: ~~15.~~14. Մինչև սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված ընտանեկան կամ սոցիալական նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը՝ 5) անպահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու համար դիմող ընտանիքների ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքը դադարում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից. 6) ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքի բոլոր անդամների կամ միակ անդամի մահվան դեպքում ընտանեկան կամ սոցիալական		

			նպաստ ստանալու իրավունքը դադարում է անձի մահվան ամսվան հաջորդող ամսվա 1-ից: ~~16.~~15. Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքները, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման հիմքով տրամադրվող այլ ծառայություններից օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվող ընտանիքները շարունակում են օգտվել դրանցից նույն չափով՝ մինչև սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված նպաստների վճարման դադարեցման ժամկետների լրանալը կամ օրենքով սահմանված այլ հիմքերի առաջացումը:»: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից (օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի), ինչպես նաև 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանումից (ենթաօրենսդրական **նորմատիվ** իրավական ակտ): Բացի այդ հստակեցվել են Նախագիծը ՀՀ տարածքում մասամբ (որոշ մարզերում) և ամբողջությամբ գործելու հետ կապված իրավակարգավորումները:		

14.	ՀՀ կառավարություն	«Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է **2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներին հաջորդող ուսումնական կիսամյակից։**»:** Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից (օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի):	Ընդունվել է:	Ընդունվել է:
15.	ՀՀ կառավարություն	«Կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկվում է **օրենքի համարը փոխել՝ տեխնիկական վրիպակն ուղղելու նպատակով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
16.	ՀՀ կառավարություն	«Կրթության մասին» օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է **2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներին հաջորդող ուսումնական կիսամյակից։**»:** Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			(օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի):		
17.	ՀՀ կառավարություն	«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է **2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:**»:** Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից (օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի):	Ընդունվել է:	Ընդունվել է:
18.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է **3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:»: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից	Ընդունվել է:	Ընդունվել է:

			(օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի):		
19.	ՀՀ կառավարություն	«Զբաղվածության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է **2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներում:»: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից (օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի):	Ընդունվել է:	Ընդունվել է:
20.	ՀՀ կառավարություն	«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է **2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝** **«Հոդված 2.** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և գործելու է անապահովության գնահատման կարգը հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետներին հաջորդող ուսումնական կիսամյակից: 2. Սույն օրենքից բխող	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:»: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներից (օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի), ինչպես նաև 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի սահմանումից (ենթաօրենսդրական **նորմատիվ** իրավական ակտ):		